նական բանութիւնէ Յունաց, զի նոքա եւս ըստ օրինակի Հայոց եղեն սարուկք օտարաց. սակայն մատնեցան 'ի խիստ ծառայութիւն Հագարացւոց, որք եդին հարկս 'ի վերայ կրօնաւորաց եւ վանօրէից նոցին, յորմէ բազումք տարագիր եղեն, և վանօրայք նոցին այլասլեալ քայքայեցան, որպէս սակաւուք նշմարեցաք 'ի գիրս վանօրէից. 'ի Գլուխն ԺԱ.

ԳԼՈՒԽ ԺԵ.

Մահ Օմարայ և Սոփրոնիոսի։ Ապտուլ Մէլէք որդի Մրվանայ։ Շինութիւն մզկիթին Օմարայ։ Երկրորդ ժողով Նիկիայ։ Գերեզման Բաղդատի։ Յովհաննէս Զմշկիկ։

ՅԵՏ այսր ամենայնի դարձ արար Օմար յաթոռ իւր 'ի Մէտինէ քաղաք, և յաւուր միում յորժամ կայր յաղօթս բազմութեամբ ժողովրդոց յառաւօտեան պահու, եհար զնա Ապու Լէվլէվ ծառայն Մուղիրայ երկսայրի դաշնակաւ 'ի հարուածս երիս և սպան զնա, և որդի նորին Ապտուլլահ բարձեալ զմարմին նորա թաղեաց առ գերեզմանի մարգարէին իւրեանց 'ի թուին Հիճրէթի ՀԳ (643), կացեալ յիշխանութեան ամս 10, ամիսս 6, և աւուրս 8։ Եւ յետ սակաւու աթոռ Խալիֆայութեանն փոխադրեցաւ 'ի Դամասկոս, եւ Մուավիէ եղեալ յաթոռ Իշխանութեանն, գլուխ եկաց հարստութեան Պէնի Ումմիէ (661)։ Յետ այնորիկ հաստատեցան Խալիֆայութիւնք Ֆաթիմեան յԵգիպտոս, եւ Ապպասեան 'ի Պաղտատ և ընդ իշխանութեամբ սոցա անկան Ասորիք, Պաղեստին և Երուսաղէմ և լցին զաշխարհն խռովութեամբ և թշուառութեամբ, մղեալ պէս պէս պատերազմունս և հեղեալ զբազում արիւնս, զամս իբրեւ 463, մինչ 'ի դալուստ Խաչակրաց. այլ թէ օ՞րպիսի իրք պատահեցան յԵրուսաղէմ 'ի միջոցիս յայսմիկ, կարի սակաւք են, զորոց ունիմք գրել զկնի։